

## ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ

Բազմավէպի հիմնարկութեան 150 ամեակի առիթով առ՝

Գերապայծառ Տէր

Հայր Գեորգ Թ. Մ. Վ. Պալեան

Արքահայր Վեներտիկի Մխիթարեան Ուխտին

Գերապայծառ Տէր,

Մտով կը մասնակցիմ Ձեր եւ Ուխտին բոլոր անդամներուն անխառն ուրախութեան զոր պիտի ճաշակէք Բազմավէպի Հիմնարկութեան 150 ամեակի յիշատակութեան հանդիսութիւններուն առիթով: Եղբայրական շնորհաւորութիւններս կը յայտնեմ Ձեզի, Գերապայծառ տէր եւ բոլոր միաբաններուն:

Միաբանութեանդ հիմնադրին, Մեծն Մխիթար Սերաստացիին լուսաւոր գաղափարականներէն մէկն եղաւ, երբ կը տեսնէր Հայոց աշխարհին մեր հայրենակիցներուն տարաբախտ վիճակը եւ անգիտութեան մթութիւնը որ կը ծանրանար զանգուածին վրայ, մշակոյթի ճամբով զարթօնք ընծայել Ազգին տարաբախտ զաւակներուն: Այս վսեմ գաղափարականով հմայուած հիմնեց Միաբանութիւնը, որուն առաքելութեան նպատակներէն մէկն էր, եւ այսօր ալ կը մնայ, ծառայել Հայ ժողովուրդին՝ կրթական եւ մշակութային համապարփակ գործի ծաւալումով:

Մխիթար Աբբահօր եւ անոր ժամանակակից Հայրերուն աշխատանքով սկիզբ առած վերածնունդի շարժումէն ետք, երկրորդ հանգրուանին վրայ, Հայր Ղուկաս Ինճիճեան կը ձեռնարկէ լրագրական հրատարակութիւններու՝ ժողովուրդին լեզուով, անոր զաւակներուն մատչելի դարձնելու համար գիտութիւնը ժամանակի զարգացումի նիւթերուն: Աւելի թափ ու ծաւալ տայու համար այս շարժումին, 1843ին Միաբանութիւնը սկիզբ կու տայ Բազմավէպի հրատարակութեան: Ըստ ժամանակի եւ սերունդներուն պահանջներուն, անխոնջ

խմբագիրները հանգրուան առ հանգրուան կը վերատեսնեն եւ կը ճշտացնեն Բազմավէպին բովանդակութիւնը եւ ժամանակով պիտի ընեն զայն գրական, պատմաբանասիրական, սակայն միշտ առաջնահերթ տեղը տալով տոհմայինին:

Բազմաթիւ ժիր եւ անխոնջ խմբագիր Հայրերը եւ անոնց հետ գործակցողները՝ իրենց անվերապահ գնահատանքն տուին անցեալի մեր աւանդին եւ յարատեւ ու նախանձախնդիր քննական աշխատանքով՝ զայն ծանօթացուցին ոչ միայն ժամանակակից, այլ նաեւ գալիք հայ սերունդներուն, ինչպէս նաեւ արեւմտեան աշխարհի արեւելագէտներուն, որոնք տաքուկ համակրանքով կը հետաքրքրուէին եւ այսօր ալ կը հետաքրքրուին հայ ժողովուրդին պատմութեամբ՝ թէ՛ ազգային եւ թէ՛ եկեղեցական եւ մշակոյթի գանձերով:

Չեմ կրնար հիացումի խօսքս չըսել Մխիթարեան Հայրերու այս բազմաթիւ հսկաներուն թէ՛ անցեալի եւ թէ՛ ներկայի, որոնք իրենց համբերատար աշխատանքով, լուրջ եւ խորունկ որոշումներով, բովանդակութեամբ ճոխ եւ անկողմնակալ գրութիւններով՝ Բազմավէպն ըրին անփոխարինելի գանձարան հայ պատմաբանասիրական գիտութեան: Հայ ժողովուրդին «արիութեան գործերուն» առընթեր, նոյն Հայրերը իրենց քննական ուսումնասիրութիւններով եւ լուսաւոր վերլուծումներով եւ բաղդատութիւններով նաեւ օտար աղբիւրներու հետ, ի վայելումն ընթերցողներուն, ծանօթացուցին հանրութեան հայ Եկեղեցւոյ մարդոց գրութիւնները, որոնք յաւերժական եւ խօսուն վկաներն են հայ մտքի արիութեան:

Բազմավէպն իր 150 տարիներու կեանքով եւ գոյատեւումով, հակառակ ամէն տեսակ դժուարութեան, իբրեւ երիցագոյնն հայ ժամանակակից մամուլին, գրաւակնն է Միաբանութեան վճռակամութեան յառաջ ընթանալու դէպի լուսաւոր վաղորդայններ, դէպի գալիքը՝ լուսաւոր լաւատեսութեամբ եւ պայծառ տեսլականով: Բազմավէպի գոյատեւումը փաստն է Ուխտին աննկուն հաւատարմութեան Սեծն Սեբաստացիին գաղափարականին՝ լուսաւորութիւնն հայ ժողովուրդին՝ գիտութեամբ թէ՛ աշխարհիկ եւ թէ՛ կրօնական-եկեղեցական նիւթերու:

Գերապայծառ Տէր, ես համոզուած եմ, թէ Բազմավէպի հիմնարկութեան 150 ամեակի համազգային հանդիսութիւնները, խորունկ գնահատանքի արտայայտութիւնները վառ խանդ եւ համոզում պիտի ընծայեն բոլոր Միաբաններուն եւ յատուկ կերպով երիտասարդ Միաբաններուն, որպէսզի յանձնառու ըլլան ընթանալու իրենց նախորդներուն ուղիներէն եւ շարունակեն միշտ փայլ ու պերճանք տալ Բազմավէպին:

Ինչպէս ամէն ձեռնարկ, անտարակոյս Բազմավէպի հրատարակութիւնն ալ երբեմն կը բախի դժուարութիւններու: Կը մաղթեմ եւ կ'աղօթեմ որ, Զեր եւ վարչական Զեր գործակիցներուն իմաստուն ղեկավարութեամբ՝ դժուարութիւնները պիտի հալին եւ Բազմավէպը պիտի մնայ իբրեւ մէկ վկան Միաբանութեան աշխուժութեան եւ վեհ կենսունակութեան: Նուիրական գաղափարներով վաստակող եւ ծառայող Տիրոջ այգիին մշակները միշտ աւելի պիտի արիանան, որովհետեւ կը պահեն ոչ միայն վսեմ գաղափարականն Մխիթար Աբբահօր, այլ նաեւ կը վայելեն անոր պաշտպանութիւնը, անոր բարեխօսութիւնը, որուն զօրավիգ է անտարակոյս բարեխօսութիւնն Աստուածամօր որ տուաւ իր Ծառային հաճութեան եւ սիրոյն «Եղիցին»:

Եղբայրական շնորհաւորութեամբ եւ խնդակցութեամբ՝ Զեզի, Գերապաշառ Տէր եւ բոլոր Միաբաններուն եւ սրտաբուխ ողջոյններով ի Քրիստոս՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԸ. ԳԱՍՊԱՐԵԱՆ  
Կաթողիկոս Պատրիարք  
Տամն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

Զմմառ, 9 Փետրուար 1994